

Ո՛վ իմ երկնաւոր Հայր, հասնես ինձ իսկոյն ու միշտ զօրութիւն, կարողութիւն տաս, երբ որ ես, քո պատուիրաններիդ համեմատ, իմ սրտիս արժէքն եմ ուզում քննել, իմանալ, Ամեն երեկոյին մտածելս քո կամքիդ եւ քո ամենագիտութեանդ վերայ՝ ամեն երեկոյ ինձ քո գաղափարներիդ առաջն քաշի բերի, քեզ հաշիւ, համար տալու համար, այն անաղաղ հասարակութեան, ուր որ հաշիւ ու համար պիտի տամ ամենուրէք եղող Ստեղծողիդ մօտն ու աչքի առաջին, ուր որ խաբէութիւնն ու ստախոսութիւնը բան չանիլ:

Ո՛վ որ այսպէս սովորեցրել է իրան՝ իւր անձի հետ հաշիւ տեսնելու, այն մարդն ո՛վ Հայր, իւր կեանքի վերջին րոպէումն, որ արդէն երթալու վերայ է իւր բոլոր կեանքի մասին հաշիւ տալու, անմեղ երեխայի վստահութիւնով Քո ողորմութեանդ վերայ յոյս կունենայ ուրախ սրտով. իսկ զղջացած մեղաւորին միտթարութիւն է այն երկնային շնորհաց խօսքն թէ՛. « եթէ որ ձեր մեղքերը արիւնի պէս եւս կարմիր լինին, ձիւնի պէս սպիտակ կանեմ »:

(Թարգ.)

Գ. Ե. Ա.

ԻՄ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

(Շարուն. Է ՉԻՔ ԱՐԻՊ. ԴԵՆ Բ. Դ.)

Քաղաքները լծիր են, իսկ զիւղացիք վտակների աղբիւրներ, ով կամենումէ համոզուել՝ թող մի բարձրավանտակի վերայից մտիկ անի իւր չորս կողմը, և կրտսնի թէ զիւղացիք ինչպէս լցվումեն քաղաք իւրեանց զանազան արտադրութեամբ: Վտակներով լցվումեն լծիրը, իսկ լծիրը գոլորշիներ են արձակում, որոնցից կազմուած անձրեւը և ձիւնը տեղալով երկրի վերայ՝ առատացնումեն վտակի աղբիւրը, բայց քաղաքը տեսնենք նոյն համեմատութեան մէջ զտնուելով՝ որչափ օդուտ է տալիս զիւղերին: Գոլորշիքից միշտ անձրեւ ու ձիւն է տեղում և սակաւ անգամ տեղատարափ կարկուտ. իսկ քաղաքների գոլորշիներից սակաւ անգամ ձիւն ու անձրեւ, բայց միշտ կարկուտ, վասն զի համեմատելով զիւղացու ահագին նիւթական օժանդակութիւնը, որ նա տալիս է քաղաքին, շատ սակաւ բարոյական օժանդակութիւն է ստանում: Արովհետեւ զիւղացին իւր

մթերքը բերելով քաղաք՝ մինչև վաճառելը՝ հարիւր անգամ ստա-
խօսների, զրկողների, արհամարհողների և անբարոյականների է հան-
դիպում և վերջապէս շատ մեծ դժուարութեամբ իւր մթերքը վա-
ճառելուց յետոյ, տեսնելով քաղաքի գեղեստութիւնները, շոքոյու-
թիւնները և պնասիրութիւնը և հրապուրուելով դոցանից, իւր
վաստակի մի մասը այդ բաներին է զոհում, մի մասը իւր ընտանեկան
անհրաժեշտութեանը և միւս մեծ մասը քաղաքում ստացած որ-
պաւորութիւնները իւր վիւղում գործադրելու Թէպէտ քաղաքի
գայթակղական գործերը սկզբում զգուանք են յարուցանում զիւ-
ղացու մէջ, բայց հետզհետէ սովորական են դառնում. գիւղացին
քաղաքից իրրեւ լաւ օրինակներ իւր ապագայ գործունէութեան հա-
մար տանում, եկեղեցիներում տեսած բարեկարգութիւնները, եթէ
կան, ու իրանք միջոց ունին տեսնելու. և ուսումնարանների հրապու-
րիչ կարգապահութիւնը, եթէ իրանք կամենան ներս մտնել տեսնե-
լու և չարտաքսուին: Վժրաղդարար պէտքէ ասել որ, գիւղացիք
քաղաք դալով և փչացած ստորին դասակարգին հանդիպելով, շատ
սակաւ են լաւ բաներ տեսնում և բարոյական օգուտ քաղում:
Այս բանի ապացոյցն է նախնի բարեմտութեան և հիւրասիրու-
թեան բացակայութիւնը և զանազան մոլութեանց ներմուծումն,
այն գիւղերի մէջ՝ որոնք մօտիկ են քաղաքներին և մեծ ծանապար-
հի վերայ են գտնվում:

Այս, Անի գնալ զայիս հանդիպելով զանազան գիւղերի, տեսայ
վերեւ յիշուած տխուր ճամբարութիւնները: Վիւղեր, ուր երբեմն բա-
րի խօսքը և հոգեշահ խրատը ընդունվումէր իրրեւ ամուսն ցօղ տօ-
թակէզ կանաչների վերայ և արդիւնաւորվումէր, այժմ այնպէս չէ.
ժողովուրդը այնքան փչացել է որ տեղն է ասել, որ ոչ լուիցէ ուն-
կամբ, լուիցէ թիկամբ:

Անին յիշելով, միտս եկաւ նորա մասին մի քանի խօսք ա-
սել, և ուրիշն իմ տեղը լինէր, անպատճառ կանէր այդ, բայց
պէտք է ասել, որ ես քարերի աւերակներով շատ չեմ հետա-
քրքրվում, մարդկային սրտի աւերակները աւելի և աւելի զանա-
զան մոլութեամբ քայքայուած տեսնելով:

Ինձ գուդէ մեղադրեն զրուածքիս մէջ հակասութիւններ տեսնե-
լով. որովհետեւ տեղ տեղ մի և նոյն հասարակութիւնը գովել եմ
և տեղ տեղ պախարակել. այդ բանում ոչինչ հակասութիւն ըստ
իս չկայ, վասն զի մի հասարակութիւն չի կարող բոլորովին փչացած

լինիլ . և տմարդութիւն է լաւ կողմերը փառաբանելով վատ կողմերը չըտեսնել կամ վատ կողմերը պախարակելով լաւերին աչք գոցել :

Ընդհանուր ամփոփումն նկատողութիւններն են հետեւեալներն :

ա). Եթէ մի ժողովրդի հոգաւոր զարգացման առաջնաընթացը չափվում է նորա դպրոցների քանակութեամբ և կարգաւորութեամբ, պէտք է խոստովանել, որ Շիրակը այս բանում շատ աննախանձելի դրութեան մէջ է, վասն զի 11,294 տուն ժողովուրդը, քաղաքում ունի միայն 7 դպրոցներ տղայոց՝ որոնցից մինը՝ միջնակարգ իսկ վեցը՝ տարրական, 5 դպրոցներ աղջկերանց, որոնցից մինը միջնակարգ, իսկ չորսը տարրական : Վիճակում 15 տարրական դպրոցների տղայոց, 1 հատ աղջկերանց, որոնց ուսանողների թիւը քաղաքների հետ հաշուելով է տղայոցը՝ 1332, աղջկերանցը՝ 364. միասին՝ 1696 երկսեռ աշակերտներ՝ 11,294 տան վերայ :

բ). Եթէ մի ժողովրդի առողջապահութեան առաջնաընթացը չափվում է բնակարանների յարմարութեամբ՝ պէտք է ասել որ Շիրակացին շատ թշուառ է այդ մասին էլ . որովհետեւ տները ախոռների հետ խառն՝ կեղտոտ, խոնաւ և գետնափոր են :

գ). Եթէ մի ժողովրդի բարեկեցութեան չափվում է նորա տնտեսական պիտոյքների բաղմազանութեամբ և հարստութեամբ, պէտք է ասել որ Շիրակացին այդ մասին էլ զուրկ է բոլոր յարմարութիւններից . որովհետեւ նորա տնտեսական պիտոյքի ցուցակը շատ համառօտ է, և սոքա են ցորեն, դարի, իւղ, պանիր և ախտացեալ անասունների միս՝ տարին մի քանի անգամ . ցորենն ու զարին՝ երկնքի անձրեւն ու ցօղն են անկեցնում, իւղն ու պանիրը նահապետական անհաշիւ տնտեսավարութիւնն է արտադրում . իսկ անասուններ՝ անհմուտ խաշնադարմանութիւնն է սնուցանում :

դ). Եթէ մի ժողովրդի հասակակցութեան չափվում է սպիտակեղէնների ու բաղանիքների կամ լոյսարանների քանակութեամբ՝ պէտք է ասել որ Շիրակացին այդ մասին ևս ողորմելի է. վասն զի նոքա չը գիտեն թէ ինչ է նշանակում սպիտակեղէն, նոքա մի շապիկ ունին, որ քառասուն կտոր կարկտանից է բաղկացած և երեք անգամ հաղիւ լուացուած . բաղանիքներ չըկան . գետեր և առուակներ հազուադիւր են, իսկ սառը ջրում լողանալը համարվում է երեսայական չարութիւն ու ստահակութիւն : Չեռքս խղճիս վերայ դնելով կասեմ, որ ամբողջ Շիրակում և Փամբակի ձորում, բացի քաղաքը, տարին 5 1/2 փութ հազիւ օժառ (սասուն) դործադրուի :

է) Աթէ մի ժողովրդի հաշման հետեւեալ չափովումէ տան կահ կարասիքի որպիսութիւնից, զգեստի վայելչութիւնից և կերակրեղէն-նրի տեսակներից՝ պէտք է ասել որ Շիրակացին այդ մասին էլ խեղճ է՝ տան կահ կարասիքը կոպիտ խեցեղէնի և փայտեղէնի շարին են պատկանում, զգեստը տղեղ ձև ունի և գործադրութեմէ ոչ թէ անհրաժեշտութեան համար, այլ թէ, «այս էլ ունիմ, այն էլ» բայց բոլորն էլ անպէտք և կոպիտ: Արարեղէնի մասին մինչև անգամ պէտք չէ խօսել:

Արջապէս Շիրակի գաւառում «հունձք բազում են և մշակը՝ սակաւ, աղաչելու է հնձոց տիրոջը, որ մշակներ հանի իւր հունձների համար»:

Աշխարհիս երեսին մարդիքը երկու տեսակ են բաժանվում, գործնական և գաղափարական. գործնական մարդիքը իւրեանց եռանդը գաղափարի արտայայտութեան վերայ չեն պարագեցնում, այլ գործի կատարման են անձնատուր լինում. իսկ գաղափարականները բոլոր եռանդը գաղափարի արտայայտութեան վերայ են զբաղեցնում. այդ տեսակ մարդիք միշտ ամեն բանի վատ կողմերը դիտելու արամադրութիւն ունին: Գործի վերայ գործնական մարդ կարգելու է. իսկ գաղափարականին՝ մօտին կանգնացնելու, որ դիտողութիւններ անեն, երկուքն էլ հարկաւոր են, երկուսից էլ օգուտ կարելի է սպասել. բայց մինակ գաղափարականը ոչինչ չի կարող անել, որովհետեւ բոլոր եռանդը գաղափարի արտայայտութեան վերայ գործ դնելով միջոց ու տոկունութիւն չի ունենալ գործին անձնատուր լինելու: Իսկ մեր ազգային գործերի գործունեայ և տոկուն պաշտօնեաների մեծ կարօտութիւն կայ, նոյնպէս և Շիրակի:

Աս «իմ նկատողութիւնները» ոչ թէ իբրեւ պաշտօնական անձն գրեցի, այլ իբրեւ սոսկ նկատող. գուցէ նկատողութիւններս մէջ կան այնպիսի կետեր՝ որոնց ուղղութիւնը իմ պաշտօնից է կախուած. դորա մասին խօսք չունիմ: Աթէ միջոց ունենամ աւելի ևս ծանօթանալու Շիրակին և Փամբակաձորին՝ դարձեալ իմ նկատողութիւնները շարունակելու եմ. որոնց մէջ տեղի կգտնեն այդ գաւառի սահմանները, լեռները՝ և գետերը՝ իւրեանց անուններով և պիտանաւորութեամբ, զուցէ հնութիւնների և ավերակների մասին էլ մի քանի խօսք առիթ ունենամ դրելու ոչ թէ իբրեւ հետազոտ. ոչ. այլ իբրեւ նկատող. և նկատողութիւններս հիմնուած կլինին միայն ժողովրդի պատմութիւնների և աւանդութիւնների վերայ:

Իմ տեսած հնութիւններն են առ այժմ Հառիձոյ, Մարմա-
 շէնի և Հոռոմոսի վանքերը և Անին։ Դոքա բոլորն էլ Բագրա-
 տունեաց հարստութեան ժամանակի շէնքերն են, Հառիձոյ Տա-
 ճորի արեւելեան պատի վերայի քանդակազործ պատկերները, եթէ
 Օւքարէ և Իւանէ սպասալարինն են՝ ուրեմն պէտք է ենթադրել,
 որ Հայոց ու Վրաց աւագանին հաղնում էին խոյեցիների պէս դո-
 շաւոր երկար կապայ և ծածկումէին բարձր զլխարկ պարսիկ ձեով։
 Մարմաշէնի արեւմտեան կողմը բոլորաձև մի քարաշէն շէնք կայ
 գիտնին համհաւասար, որ Պ. Արիցեանը իւր հնաքանական հե-
 տագոտութեամբ կռատուն է կնքում. ըստ իս դա եղել է աւագան,
 որ մի քառակուսի և աւելի սաժէն տրամագիծ ունի, և շինուած
 է թերեւս Վահրամ Պահլաւունու ժամանակով։ Հոռոմոսի վան-
 քին մօտ հին շինուածներից մինը համարում են թաղաւորաց խոր-
 հրդարան. խորհրդարան կոչուածը իւր անուանը ոչինչ յարմա-
 րութիւն չունի. խորհրդարան կոչուած շէնքից մի մուտք կայ դէպի
 մի տաճար, որ Հոռոմոսի վանք է կոչվում. այդ տաճարը, որի
 արեւելեան կողմը կայ մի փոքրիկ սեղան, սկզբում եղել է դաւիթ
 մի հին եկեղեցու, որ այժմ կործանուած է և տեղն անգամ չէ
 երևում, միայն սիւնի խարխալները (սե լեռ քարից) դեռ ընկած
 են վանահօր սենեակների առաջ։ Այդ դաւիթը կապուած է եղել
 հին եկեղեցուն մի դռնով, և հենց այդ դռան տեղն էլ շինուած
 է փոքրիկ սեղանը։ Այս գաւթի առաջին կարգի հարաւային սիւնի
 վերայ դրուած է ՄԽ տառերը, որ հանգուցեալ Արէլ եպիսկո-
 պոսը համարում է շինութեան թուականը, շատ սխալ ենթադրու-
 թիւն. որովհետեւ ՄԽ շինութեան թուական չէ, և տառերի
 անհմուտ զրչութիւնը ցոյց է տալիս, որ ոմն մխիթար կամ մրխի-
 թարեան իւր անուան տառերը քանդակել է սիւնի վերայ. շինու-
 թեան արձանագրութիւնը գեղեցիկ տառերով զրուած է գաւթի
 երդիկի շուրջը, ներսի կողմից, իսկ գաւթը՝ որ լուսամուտներ
 չունի, հարաւային կողմից ունեցել է դուռն, որ այժմ փակուած
 է։ Արդիկի շուրջը եղած արձանագրութեան թուականն է ՉԻՕ։
 Օւքամանալի բան, թէ այս ժամատան փոքրիկ սեղանը և թէ միւս
 հին վանքերից մի քանիաների սեղանները չունին սանդուխտ Հին
 Հոռոմոսի այժմեան շէն վանքից դէպի հարաւ կամարակապ և սիւ-
 նաղարդ շէնքեր կան, որոնց մէջ գերեզմանաքարերը ցոյց են տալիս
 որ աւագանին այդ տեղ է թաղուել, դժբաղդարար գերեզմանա-

քարերը չունին տառեր և եթէ կան՝ անվերծանելի են: Հռոմոսի վանքը ինչպէս և միւս վանքերը Բագրատունեաց ժամանակի կցորդ մի քանի տաճարներից են բաղկացած, որոնցից ամեն մինը շինել է մի լշխան կամ թագաւոր իւր հոգու փրկութեան համար, պարտք զնկելով վանահայրերի վերայ տուած նուէրների փոխարէն որոշեալ թուով Պատարագ անել, զանցառուներին սարսափելի նզովքներ սպառնալով: արդեօք այժմեան վանահայրները ինչ են մտածում յիշեալ նզովքների համար, իւրեանց զանցառութեան գէ՞մ: Առ այժմ այսքան:

Յ. Վ. Մ.

ՍԿԶԵՈՒՆՔ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ.

(Երբեմն. Աբբա, Կէ. Դ.)

ԲՈՅՍՈՒՐԻ ԱՆՆԳԱՌՈՒԹԻՒՆԸ.

Խորշը ուսումնասիրելով մենք տեսանք, որ բոյսի գլխաւոր զանգուածը ածխածնից, ջրածնից, թթուածնից և բորակածնից է բաղկացած: Առանց այդ չորս տարրի՝ ոչ մի կենդանի խորշ չէ կարելի ներկայացնել: Բոյսը այրելու ժամանակ բոլոր այդ չորս տարրն գաղանման գրութեամբ արտաթորում են և միանում են մթնոլորտի հետ, բայց այրելուց յետոյ միշտ մոխիր է մնում: Ինչպէս քիմիական վերլուծութիւնը ցոյց է տալիս իւրաքանչիւր բոյս, բացի վերոյիշեալ չորս տարրը բաղկացած է լինում անշուշտ շատ թէ քիչ քանակութեամբ այլ և այլ տարրերից. օրինակ կալի, նատրի, կրածին, մագնի, երկաթ, ծծումբ, ֆոսֆոր և այլն:

Հողը, ջուրը և մթնոլորտի օդը պարունակում են իւրեանց մէջ այն բոլորը, ինչ որ բոյսին է հարկաւոր: Բոյսի կերակուրը մասամբ գաղանման է և մասամբ հեղուկանման: Հեղուկանման կերակուրը ընդունում է առաւելապէս արմատներով, իսկ գաղանման կերակուրը առաւելապէս տերեւներով:

Բոյսի գաղանման կերակուրը բաղկացած է ածխածնի, թթուածնի, որը գլխաւորապէս մթնոլորտի օդի մէջն է լինում, հեղուկանման կերակրի տեղ ծառայում է ջուրը, որի մէջ հալուած են լինում զանազան աղեր և որոնք բաղադրուած են լինում բորակածնից, ֆոսֆորից, երկաթից կալիից, ծծմբից և այլն: Այդ բոլոր նիւթերը սովորաբար հողի մէջն են գտանւում և բոյսը կարող է ընդունել գոցա միայն հալուած գրութեամբ:

Արմատները ջուր են ընդունում փոխատուութեան (Эндосмос և Экзосмос) միջոցով: Եթէ գործարանաւորական թաղանթից կազմուած պարկ վերցնենք (օրինակ խոզի փամփուշտիկը կամ արհեստական կերպով